

**ՋԵԿՈՒՑԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ**  
**ԶՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ԵՎ ԱԿԱԳԱՆՈՒ**  
**ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ**  
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հարգելի համազյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2017 թվականի ընթացքում համայնքապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները: Այսօրվա մեր հաշվետվությանը ներկա է ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների բաժնի պետ պարոն Գևորգ Գևորգյանը:

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1831, տնտեսությունների թիվը՝ 305:

Համայնքապետարանի աշխատանքները եղել են առավել բաց և թափանցիկ: Համայնքում տեղական ինքնակառավարումը իրականացնելիս հաշվի են առնվել համայնքի բնակիչների շահերը, հնարավորինս փորձել ենք համայնքի բնակիչների շրջանում բարձրացնել իրազեկվածության մակարդակը: Եվ համայնքի ավագանին, և համայնքի ղեկավարը և աշխատակազմը ջանացել են իրենց աշխատանքով արժանանալ համայնքի բնակիչների գոհունակությանը:

2017 թվականի ընթացքում աշխատանքները կազմակերպվել են համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի միջոցով և իրականացվել են գործառույթներ, որոնք վերապահված են եղել բացառապես օրենքով և նպաստել են համայնքի սոցիալական և տնտեսական կայուն զարգացմանը:

2017 թվականի ընթացքում հրավիրվել և անցկացվել է ավագանու 8 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի և համայնքի բնակիչների շահերին վերաբերվող տարբեր հարցեր, ընդունվել է 57 որոշում, որոնցից 9-ը՝ նորմատիվ, 48-ը՝ անհատական, նորմատիվ որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ Արդարադատության նախարարություն՝ իրավական փորձաքննության:

2017 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 23 որոշում, արձակվել է 12 կարգադրություն:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները հրապարակվել են համայնքապետարանի կայքում:

2017 թվականի ընթացքում բնակիչների պահանջով գրվել է 489 տեղեկանք:

Ստորև ներկայացվում է 2017 թվականի կատարած աշխատանքները և դրանց ֆինանսավորման համար ծախսված գումարները:

2017 թվականի Ջրաբքի համայնքապետարանի բյուջեով հաստատվել է 38231500/ երեսուներե միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 39733872 / երեսունինը միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր յոթասանասուներկու / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 103.92 %-ը:

Ստորև կներկայացնենք 2017թվականի ընթացքում կատարված բոլոր ծախսերը:

2005 թվականից մինչ օրս համայնքում գործում է մանկապարտեզ: Այն կապիտալ վերանորոգվեց 2015-2016թվականներին: Երեխաների համար ստեղծվեցին հարմարավետ բոլոր պայմանները և դրա շնորհիվ է, որ բոլոր երեխաները մեծ սիրով են հաճախում մեր մանկապարտեզ: Մանկապարտեզն ամբողջությամբ ֆինանսավորվում է համայնքապետարանի միջոցներով: Մանկապարտեզ են հաճախում 65 երեխա: 2017 թվականի ընթացքում, որպես սուբսիդիա հատկացվել և փոխանցվել է 10975000/ տաս միլիոն ինը հարյուր յոթասանսունինգ հազար / դրամ գումար: <<Ջրաբքի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում պարբերաբար այցելություններ են կատարվել , ստուգվել է սանիտարահիգիենիկ վիճակը, օրվա սնունդի բացթողումը: Համայնքապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

2017թվականի ընթացքում մանկապարտեզի բակում հիմնովին կառուցվեց մեծ ու ընդարձակ նոր գունագեղ խաղահրապարակ: Ամբողջ աշատանքների և ապրանքների ձեռքբերման համար համաապատասխան հոդվածներից փոխանցվել է 2234285/ երկու միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր ութսունհինգ/ դրամ գումար:

<<Ջրաբքի Մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ին 2017 թվականի ընթացքում որպես ընթացիկ անհատույց վճարներ` սուբսիդիա հատկացվել և փոխանցվել է 955483 /ինը հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր ութսուներեք/ դրամ գումար: Մշակույթային արվեստների, սպորտի և պարի դերի բարձրացման նպատակով ավագանու համաձայնությամբ մշակույթի տանը գործում են պարի, սպորտի և շախմատի խմբակներ, որտեղ հաճախում են 150 երեխաներ:

2017 թվականի ընթացքում կազմակերպվել են միջոցառումներ նվիրված Կանանց միջազգային օրվա` Մարտի 8-ի, Հաղթանակի և խաղաղության

տոնի՝ Մայիսի 9-ի, Վերջին զանգի, Երեխաների պաշտպանության օրվա՝ հունիսի 1-ի կապակցությամբ, սեպտեմբերի 1- Գիտելիքի օրվա կապակցությամբ, Ուսուցչու տոնի և Ամանորի կապակցությամբ :

1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 693000/վեց հարյուր իննսուներեք հազար / դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ին կապակցությամբ: Միջոցառման ժամանակ համայնքի թվով 84 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5130 / հինգ հազար մեկ հարյուր երեսուն / դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի թվով 26 կին ուսուցիչներին և մանկապարտեզի թվով 11 կին աշխատակիցներին նույնպես նվիրեց 5130 / հինգ հազար մեկ հարյուր երեսուն / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ 5130 / հինգ հազար մեկ հարյուր երեսուն / դրամ արժողությամբ նվերներ տրամադրվեց նաև Մշակույթի տան տնօրենին, համայնքում միակ կին ազատամարտիկին և երկու կին ավագանու անդամին, բուժկետի 2 աշխատակիցներին և փոստային կապի բաժանմունքի աշխատակցին:

2-րդ միջոցառումը կազմակերպեց Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի ավագանու որոշմամբ համայնքի բյուջեից հատկացվեց 100000 /մեկ հարյուր հազար դրամ/ գումար համայնքի թվով 10 շրջանավարտների նվերների ձեռքբերման համար:

Համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրությունից անմասն չեն մնացել նաև համայնքի ազատամարտիկները : Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում , միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 200000 /երկու հարյուր հազար/ դրամ գումար:

3-րդ միջոցառումը Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվեց երկու ժամյա միջոցառում, միջոցառմանը հրավիրված էին հինգ հեքիաթի հերոսներ: Միջոցառման կազմակերպման համար փոխանցվել է 55000/ հիսունհինգ հազար/ դրամ:

4-րդ միջոցառումը կազմակերպվեց Գիտելիքի օրվա՝ սեպտեմբերի 1-ի, կապակցությամբ: Համայնքի դպրոցի 1-ին դասարան հաճախող թվով 30 երեխաներին նվիրվեցին գրենական պիտույքներով լի դպրոցական պայուսակներ, որոնց ձեռքբերման համար համայնքի բյուջեից հատկացվել է 231000/ երկու հարյուր երեսունմեկ հազար / դրամ գումար: Համայնքի միջնակարգ դպրոցը իր հիմնախնդիրներով

մշտապես եղել և մնում է համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում: Բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվում են դպրոցին աջակցելու հարցում: 2006 թվականից սկսած համայնքի համայնքապետարանը փոխանցում է աշակերտների դպրոցական դասագրքերի վարձավճարներն ամբողջությամբ: Ջրարբի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցին ֆինանսական օգնություն ցույց տալու նպատակով, դպրոցի դասագրքերի համար 2017 թվականին հատկացվել և փոխանցվել է 740900/ յոթ հարյուր քառասուն հազար ինը հարյուր / դրամ գումար: Ջրարբի համայնքի համայնքապետարանը հոգացել է նաև դպրոցի I-XII դասարանների աշակերտներին պատմամշակութային օջախներ տանելու և ամառային արձակուրդներին էքսկուրսիաներ կազմակերպելու համար նախատեսված ճանապարհածախսերը, որոնց ընդհանուր գումարը կազմում 130000 / մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ գումար : Ջրարբի միջնակարգ դպրոցում նոր ջեռուցման համակարգի անցկացման ամբողջ գազաֆիկացումը կատարվեց համայնքապետարանի միջոցներով, որի համար ծախսվել է 397000/ երեք հարյուր ինսունյոթ հազար / դրամ:

5 -րդ միջոցառումը նվիրված էր Ուսուցչի տոնին՝ հոկտեմբերի 5-ին: Համայնքի միջնակարգ դպրոցի թվով 29 ուսուցիչների նվերների ձեռքբերման համար հատկացվեց 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ գումար և յուրաքանչյուրին տրամադրվեց 3450 /երեք հազար չորս հարյուր հիսուն/ դրամի արժողությամբ նվերներ:

Ջրարբի համայնքում միջոցառումների շարքը ավարտվում է տարեվերջին կազմակերպված Ամանորյա միջոցառմամբ, որի կազմակերպման համար հատկացվել է 955644 /ինը հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր քառասունչորս/ դրամ գումար:

Միջոցառման ժամանակ դպրոցի I-IV դասարանի թվով 89 աշակերտներին, Ջրարբի համայնքի մանկապարտեզի թվով 52 երեխաներին, համայնքի թվով 5 հաշմանդամ երեխաներին և համայնքապետարանի, մանկապարտեզի և մշակույթի տան աշխատակիցների թվով 20 երեխաներին հանձնվեցին 2700/երկու հազար յոթ հարյուր / դրամի արժողությամբ նվերներ, որոնց ընդհանուր թիվը կազմում է 450900/ չորս հարյուր հիսուն հազար ինը հարյուր / դրամ:

Այդ օրը մանկապարտեզում՝ Ամանորյա հանդեսի ժամանակ, մեծ անակնկալ մատուցվեց երեխաներին: Մանկապարտեզի միջոցառմանը հրավիրվել էին երեխաների կողմից շատ սիրված հեքիաթի հերոսները , Ձմեռ պապն ու Ջյունանուշը: Միջոցառման կազմակերպման համար հատկացվեց 55000 / հիսունհինգ հազար/ դրամ գումար:

Ամանորյա միջոցառումը ոչ միայն երեխաներով սահմանափակվեց; այլ նաև անակնկալ մատուցվեց համայնքի թվով 167 թոշակառուներին:

Մշակույթի տանը նրանց համար կազմակերպվեց միջոցառում, որի ժամանակ եղավ հյուրասիրություն, նվերների և շնորհակալագրերի բաշխում: Այդ օրը առավել տոնական դարձրեցին իրենց ելույթներով հանդես եկող համայնքի շնորհալի երեխաները և <<ՇԵՅՔ >> պարային համույթը: Միջոցառման համար համայնքի բյուջեից ծախսվել է 449744 /չորս հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր քառասունչորս/ դրամ գումար:

2017 թվականի ընթացքում համայնքի թվով 33 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն, որի ընդհանուր գումարը կազմում է 1350000 / մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ դրամ:

2017 թվականի ընթացքում, որպես ֆինանսական աջակցություն՝ 265000/ երկու հարյուր վաթսունհինգ հազար դրամ հատկացվեց տարբեր կազմակերպությունների:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2017թվականին հարազատին կորցրած 7/յոթ/ ընտանիքի տրամադրվել 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ ֆինանսական աջակցություն:

Համայնքի ավագանու որոշմամբ տարեկան 995000 /ինը հարյուր ինսունհինգ հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթեզրերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2017 թվականին աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 994800/ ինը հարյուր ինսունչորս հազար ութ հարյուր / դրամ գումար:

Համայնքի փողոցների հարթեցման և մաքրման աշխատանքների համար ծախսվել է 177000/մեկ հարյուր յոթանասունյոթ հազար / դրամ գումար, որի արդյունքում հարթեցվել են գանանային և աշնանային անձրևների հետևանքով առաջացած ջրափոսերը:

2017թվականին իրականացվել են նաև կոյուղագծերի մաքրման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջությամբ մաքրվեցին կոյուղագծերը: Նշված աշխատանքների համար համայնքի բյուջեից ծախսվել է 173958 /մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր հիսունույթ / դրամ գումար:

2017 թվականին Ջրարբի համայնքի բյուջեից փողոցների գիշերային լույսերի վերանորոգման և սարքավորումների ձեռքբերման համար ծախսվել է 94950 / իննսունչորս հազար ինը հարյուր հիսուն/ դրամ գումար: Ամբողջ տարվա համար օրական 4- 5 ժամ լուսավորություն է ապահովվում համայնքում:

Ելնելով անհրաժեշտությունից ` համայնքի Ղ. Աղայան փողոցում կոյուղագծի կրկնակի խողովակաշար անցկացվեց: Կոյուղագծի կրկնակի խողովակաշարի և դրա անցկացման աշխատանքների համար համայնքի բյուջեից ծախսվել է 1592390/ մեկ միլիոն հինգ հարյուր իննսուններկու հազար երեք հարյուր իննսուն / դրամ գումար:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների , վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները`

Հարգելի հյուրեր, ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ Ջրարբի համայնքը 2008-ից մինչև 2017թվականը ներառյալ հողի հարկի և շենք շինության գույքահարկի գծով ապառքներ չունի, ինչի համար ուզում եմ շնորհակալություն հայտնել Ջրարբիի ազգաբնակչությանը իրենց հարկային պարտավորությունները բառից բուն իմաստով պարտաճանաչ և բարեխղճորեն կատարելու համար:

2017 թվականին մուտքագրվել են հետևյալ եկամուտները`

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների	4120.0 - 4990.3 – 121.12%
Գյուղ. նշ. հողերից հողի հարկ	2335.0 - 2370.1 – 101.50%
Վարձակալական հողի հարկ	210.0 – 337.3 – 160.61%
Տեղական տուրք	200.0 - 219.2 - 109.6%
Դոտացիա	28611.5 – 28611.5 - 100%
Գույքի վարձակալություն	180.0 - 215.0 - 119.44%
Տեղական վճար	2575.0 - 2896.7 - 112.49 %

2017թվականին կատարվել են հետևյալ ծախսերը`

- Աշխատավարձի համար ծախսվել է 11877381/ տասնմեկ միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար երեք հարյուր ութսունմեկ/ դրամ.
- Պարգևատրման համար ծախսվել է 659000/ վեց հարյուր հիսունինը հազար / դրամ.

- Էներգետիկ ծառայությունների համար ծախսվել է 2030412 / երկու միլիոն երեսուն հազար չորս հարյուր տասներկու / դրամ,
- Աղբահանության համար ծախսվել է 994800 /ինը հարյուր իննսունչորս հազար հինգ ութ հարյուր/ դրամ
- Կապի ծառայությունների համար ծախսվել է 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ դրամ:
- Համակարգչային ծառայությունների համար ծախսվել է 94400 /իննսունչորս հազար չորս հարյուր / դրամ
- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար ծախսվել է 80000 /ութսուն հազար/ դրամ.
- Տեղեկատվական ծառայությունների համար ծախսվել է 74640 / յոթանասունչորս հազար վեց հարյուր քառասուն / դրամ.
- Ներկայացուցչական ծախսերի համար ծախսվել է 1682595/մեկ միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր իննսունհիզ/ դրամ.
- Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար ծախսվել է 2497338/երկու միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր երեսունութ/ դրամ.
- Մասնագիտական ծառայությունների համար ծախսվել է 15313/տասնհինգ հազար երեք հարյուր տասներեք / դրամ.
- Գրասենյակային նյութերի համար ծախսվել է 418150/ չորս հարյուր տասնութ հազար մեկ հարյուր հիսուն / դրամ:
- Տրանսպորտային նյութերի համար ծախսվել է 147300/ մեկ հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր / դրամ:
- Կենցաղային և հանրային սննդի նյութերի համար ծախսվել է 300000 / երեք հարյուր հազար /դրամ:
- Հատուկ նպատակային այլ նյութերի համար ծախսվել է 589014/ հինգ հարյուր ութսունինը հազար տասնչորս / դրամ.
- Սուբսիդիաներ՝ պետական(համայնքային) կազմակերպությունների համար ծախսվել է 11192579/ տասնմեկ միլիոն մեկ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր յոթանասունինը/ դրամ գումար:
- Այլ նպաստներ բյուջեից ծախսվել է 2545900 /երկու միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր / դրամ.
- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար ծախսվել է 150000/ մեկ հարյուր հիսուն հազար / դրամ
- Շենքերի և շինությունների կառուցման համար ծախսվել է 1312421/ մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար չորս հարյուր քսանմեկ/ դրամ.

- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար ծախսվել է 2372288 /երկու միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր ութսունութ/ դրամ.
- 
- Վարչական սարքավորումների համար ծախսվել է 201000 /երկու հարյուր մեկ հազար / դրամ.
- Ոչ նյութական հիմնական միջոցների համար ծախսվել է 40000/ քառասուն հազար / դրամ.

Ջրարբի համայնքում առկա և լուծման անհրաժեշտություն ունցնող ծախսատար խնդիրները հետևյալն են՝

- 1 Միջհամայնքային փողոցների ասֆալտապատում.
2. Դպրոցի շենքի վերանորոգում .
3. Մշակույթի տան գույքի ձեռք բերում:

Ջրարբի համայնքի ղեկավար՝

Ղ.Ղազարյան



ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ  
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2011 թվականի 1-կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները ըստ բնագավառների:

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1780, տնտեսություններինը՝ 305:

2011 թվականի 1-ին կիսամյակում Ջրարքի գյուղական համայնքի ղեկավարը և *համայնքի ավագանին* կատարել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել նպաստելու համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը և այդ աշխատանքների մասին ամբողջական և *հավաստի տեղեկատվություն է տրամարվել համայնքի բնակիչներին*։

Գյուղապետարանի աշխատանքները 1-ին կիսամյակում եղել է առավել բաց, թափանցիկ բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Համայնքում 2005 թվականից գործում է մանկապարտեզ, 2010 թվականի նոյեմբերին համայնքի ղեկավարի և ավագանու որոշմամբ Ջրարքի համայնքի «Մանկապարտեզ» համայնքային հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվեց Ջրարքի գյուղական համայնքի «Ջրարքի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: Տարեսկզբին հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ սուբսիդիան <Ջրարքի համայնքի մանկապարտեզ> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1-ին կիսամյակում հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է

2993700 / երկու միլիոն ինը հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Մանկապարտեզ են հաճախում 70 նրնիսա, վերջին տարիներին նկատվում է նախադպրոցական հիմնարկ հաճախող երեխաների թվի աճ, որի հետևանքով մանկապարտեզի գույքը չի բավականացնում: Նշված խնդիրը լուծելու համար գյուղապետարանը ձեռք բերեց 5 հատ երկտեղանոց մահճակալներ և 15 աթոռներ և նվիրատվության պայմանագրի համաձայն՝ որպես անհատույց գույք, որի ընդհանուր գումարը կազմում է 325000 /երեք հարյուր քսանհինգ հազար/ դրամ, հանձնեց մանկապարտեզին:

2011 թվականի 1-ին կիսամյակում համայնքի ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, և 560000 /հինգ հարյուր վաթսուն հազար/ դրամը տրամադրվել է համայնքում կազմակերպված միջոցառումների ժամանակ նվերներ տալուն:

1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 400000 /չորս հարյուր հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ : Միջոցառման ժամանակ համայնքի թվով 50 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5000 /հինգ հազար/ դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի անձնակազմի թվով 20 կին աշխատողներին և մանկապարտեզի թվով 10 կին աշխատակիցներին նույնպես նվիրեց 5000 / հինգ հազար/ դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին:

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները: Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 100000 / մեկ հարյուր հազար/ դրամ գումար:

Ջրաբքի գյուղական համայնքում ֆիզիկական կուլուրայի և սպորտի զարգացման նպատակով համայնքում կազմակերպվեց վոլեյբոլի տղամարդկանց մրցաշար՝ կազմված 4 թիմերից: Համայնքի ավագանու որոշմամբ սպորտային միջոցառման ժամանակ 1-ին և երկրորդ տեղերը

հաղթող խմբերը պարգևատրվեցին համապատասխանաբար 40000 / քառասուն հազար/ և 20000 /քսան հազար/ դրամներով:

Ցանկացած առիթով գյուղապետարանը միշտ պատրաստ է աջակցելու համայնքի միջնակարգ դպրոցին : 1-ին կիսամյակում գյուղապետարանը 110000 /մեկ հարյուր տաս հազար/ դրամ հատկացրեց համայնքի միջնակարգ դպրոցին՝ աշակերտներին պատմամշակութային օջախներ տանելու և էքսկուրսիաներ կազմակերպելու համար: Դպրոցում առկա էր խմելու ջրի խնդիր, նշված խնդիրը լուծելու համար դպրոցի տնօրենի հետ կնքվեց նվիրատվության պայամանագիր և տրամադրվեց մեկ հատ էլեկտրական պոմպ:

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 55000 /հիսունհինգ հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթերները: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով, որը 2011 թվականի 1-ին կիսամյակում կազմում է 333000 / երեք հարյուր երեսուն հազար/ դրամ գումար:

2011 թվականի 1-ին կիսամյակում 250000 / երկու հարյուր հիսուն հազար/ դրամ հատկացվեց գյուղապետարանին պատկանող ՎԱԶ2106 մակնիշի ավտոմեքենան վերանորոգելու համար և 29 /քսանինը հազար դրամ էլ հատկացվել է ավտոմեքենայի պարտադիր ապահովագրման համար :

Դեռ 2009 թվականից համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրենց առջև խնդիր էին դրել , որ համայնքում մինչև 2012 թվականը կլուծեն նոր կոյուղագիծ անցկացնելու խնդիրը, այդ ուղղությամբ տարվել են բավականին աշխատանքներ :2011 թվականի առաջին կիսամյակում Արմավիրի մարզպետի որոշմամբ համայնքում իրակացվեց <<Վաճատրվող հասարական աշխատանքներ>> ծրագիրը: Ծրագրի նպատակն էր <<Ջրարբի համայնքի ջրմուղ կոյուղու կառուցման, սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ>, ծրագրի իրականացման համար գյուղապետարանի կողմից կատարվեց 1478126 / մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունուր հազար հարյուր քսանվեց/ դրամի ներդրում, որի արդյունքում իրականացվեցին հետևյալ աշխատանքները՝

1. խողովակների համար խրամատների փորում,
2. կոյուղու խողովակաշարի նոր կոնալեկտի ստեղծում, մոնտաժում
3. խողովակների ծածկում հողով,
4. կոյուղու խողովակաշարի լյուկերի կառուցման օժանդակ աշխատանքներ:

Ի շնորհիվ գյուղապետարանի ներդրումների և <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրի համայնքի Խ.Աբովյան փողոցի 1,2,3,4,5,6 փակուղիներում և Պ.Սևակ փողոցը ամբողջությամբ անցկացվեց 732 մ նոր կոյուղագիծ:

2011 թվականի 1-ին կիսամյակում համայնքում լուծվեց ևս մեկ կարևորագույն խնդիր: Ավագանու որոշմամբ համայնքի բյուջեով նախատեսված 4269 «Փողոցների լուսավորում» հողվածից 536000 (հինգ հարյուր երեսունվեց հազար) դրամը հատկացվեց Ջրարբիի գյուղական համայնքի Խ.Աբովյան փողոցում, Ս.Լաչատրյան փողոցի վերջնամասում Ղ.Աղայան փողոցի սկզբնամասում և Պ.Սևակ փողոցում գիշերային լուսավորություն անցկացնելու համար: Ձեռք բերվեցին անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներ և տեխնիկական աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հողվածից հատկացվեց 143000 /մեկ հարյուր քառասուներեք հազար/ դրամ գումար: Էլեկտրաէներգիայի ծախսերը կատարվում է գյուղապետարանի միջոցներով: Նխատեսված է ամբողջ տարվա համար օրական 4- 5 ժամ լուսավորություն:

Համայնքի բյուջեով նախատեսված Սոցիալական պաշտպանություն խմբից կատարել է 528000 /հինգ հարյուր քսանութ հազար/ դրամի ծախսերը՝ մասնավորապես.

1. <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը հայանքի բյուջեի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հողվածից հատկացվեց 100000 (մեկ հարյուր հազար) դրամ գումար՝ Արմավիրի մարզի կարկուտից տուժած 22 գյուղական համայնքներին դրամական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. 2011 թվականի 1-ին կիսամյակում համայնքի անապահով թվով 9 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 300000 / երեք հարյուր հազար / դրամ : 28 / քսանութ հազար/ դրամ տրամադրվել է 1 ընտանիքի որպես դրամական աջակցություն ԴՈՍԱՖ-ում սովորող երեխայի ճանապարհածախսի նպատակով:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի մահացածների ընտանիքներին տրամադրվում է 50000 / հիսուն հազար/ դրամ օգնություն, 2011 թվականին 1-ին կիսամյակում 2 մահացածների ընտանիքներին տրամադրվել է 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ օգնություն, յուրաքանչյուր ընտանիքի 50000 / հիսուն հազար/ դրամ:

2010 թ թվականից սկսած գյուղապետարնը համայնքի բյուջեից գումար է հատկացնում ծաղկեպսակներ ձեռք բերելու համար և 2011 թվականի 1-ին կիսամյակում

2011 թվականի 1-ին կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 297 տնդեկանք:

2011 թվականի 1-ին կիսամյակում տնդի է ունեցել 8 ավագանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները:

2011 թվականի 1-ին կիսամյակում համայնքում կայացավ 1,47 հա հողերի աճուրդ վաճառք , որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվլ 1949660 /մեկ միլիոն ինը հարյուր քառասունհինը հազար վեց հարյուր վաթսուն / դրամ եկամուտ:

2011 թվականի Ջրարբի համայնքի բյուջեով հաստատվել է՝ 23664400 /քսաներեք միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր/ դրամի եկամուտ, մուտքագրվել է 12856661 /տասներկու միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր վաթսունմեկ/ դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 54,33 %-ը:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված տնդական հարկերի՝ գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների , վարձակալական հողի հարկի և տնդական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների	2400.0 - 1068.7 - 44.53%
հողի հարկ համայնքի վարչ. տարծքում	2300,0 -424.8 -18.47%
վարձակալական հողի հարկ	150.0 – 9.4 - 6.30%

Տեղական տուրք	230.0 - 81.9 -35.61%
Հողի օտարումից եկամուտներ	- 1949.7
Տեղական վճար	- 30.0
Դոտացիա	18584.4 - 9292.2 - 50%

2011 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

#### Գյուղապետարան

Աշխատավարձ	- 3648.7 հազ. դրամ
Պարտադիր սոց. վճար՝	- 713,3 հազ. դրամ
Էներգետիկ ծառայություններ	- 150,3 հազ. դրամ
Կապի ծառայություններ	- 28,2 հազ. դրամ
Ապահովագրական ծախսեր	- 29,0 հազ. դրամ
Ներկայացուցչական ծախսեր	- 400,0 հազ. դրամ
Ընդհանուր բնույթի այլ ծառ.	- 223,0 հազ. դրամ
Մասնագիտական ծառայութ.	- 12,7 հազ. դրամ
Գրասեն. ապրանքներ՝	- 144,0 հազ. դրամ
Տրանսպորտային նյութեր	- 150,0 հազ. դրամ
Կենցաղային և հանրային սննդի	- 232,5 հազ. դրամ
Պարտադիր վճարներ	- 3,0 հազ. դրամ

Շենքերի և շինությունների կառուցում	-995,0 հազ. դրամ
Շենքերի և կառույցների նորոգում	-285,1 հազ. դրամ
Վարչական սարքավորումներ	- 470,0 հազ. դրամ
Կոմունալ ծառայություններ	- 275,0 հազ. դրամ
Նատուկ նպատակային այլ	- 536,0 հազ. դրամ
Կրթական, մշակույթային և	- 60.0 հազ. դրամ
Այլ նպաստներ բյուջեից	- 528,0 հազ. դրամ
Ընդհանուր բնույթի այլ	-210,0 հազ. դրամ
Սուբսիդիաներ	- 2993,7 հազ. դրամ

2011 թվականի սոց. վճարի և կենսաթոշակի գծով գյուղապետարանին պարտքեր չկան`

Գյուղապետարանի համար - 713,3 հազ. դրամ

---

Ընդամենը վճարել ենք - 713,3 հազ. դրամ

Աշխատավարձի գծով պարտքեր չկան`

Գյուղապետարանի համար - 3648,7 հազ. դրամ

---

Ընդամենը վճարել ենք - 9740.6 հազ. դրամ

Թերթի բաժանորդագրության համար փոխանցվել է 12600 /տասներկու հազար վեց հարյուր/ դրամ:

» Նայ. Էլ. Ցանց«-ին` գյուղապետարանը փոխանցել է`

Գյուղապետարանի համար 98,2 հազ. դրամ ,

---

Ընդամենը փոխանցվել է 98,2 հազ. դրամ:

»ՆայՌուսգագարդին«՝ գյուղապետարանը փոխանցել է՝

Գյուղապետարանի -52,1 հազ. դրամ

---

Ընդամենը փոխանցվել է -52,1 հազ. դրամ

2011 թվականի հունիսի 30- ի դրությամբ Ջրաբքի համայնքի վարչական բյուջեի մնացորդը կազմում է 569583 / հինգ 1 հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր ութանասուներեք / դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը կազմում է 5541150 / հինգ միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար հարյուր հիսուն/ դրամ:

Ջրաբքի համայնքի ղեկավար՝

Ղ.Ղազարյան